2021, № 1, 18-28 *Տնտեսագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.1.018

ՄՍԱՄԹԵՐՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շուկայական հարաբերություններն անհնար է պատկերացնել առանց տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցության: Մրցակցությունը ստիպում է տնտեսավարողներին արտադրել ավելի որակյալ ապրանք առավել ցածր գնով, ինչը, իր հերթին, հանգեցնում է տեխնոլոգիական առաջընթացի, հումքի խնայողության, ապրանքների բաշխման ուղիների օպտիմալացման: Պարենային անվտանգության ապահովման համատեքստում պարենային ապրանքների շուկայում կարեվորվում են ոչ միայն ապրանքների ինքնաբավության, այլ նաև բարեխիղճ մրցակցության ապահովման հարցերը:

«Անբարեխիղճ մրցակցություն» հասկացությունը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել Ֆրանսիայում 1850 թվականին: Ֆրանսիական դատարանները, հիմք ընդունելով երկրի քաղաքացիական օրենսգրքի 1382 հոդվածի ընդհանուր դրույթները[1], որոնք հակաօրինական գործողությունների կատարման դեպքում նախատեսում էին վնասների փոխհատուցում, կարողացան ստեղծել անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանության համապարփակ և արդյունավետ համակարգ[2]:

Միջազգային իրավական պրակտիկայում «անբարեխիղճ մրցակցություն» հասկացությունը առաջին անգամ հիշատակվել է 1883 թվականի մարտի 20-ի՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան համաձայնագրի 9-10, 10bis և 10ter հոդվածներում, համաձայն որի՝ անբարեխիղճ մրցակցության ակտ է համարվում ամեն մի գործողություն, որը հակասում է արդյունաբերական ու առևտրային գործերում ընդունված արդար սովորություններին[3]: Մասնավորապես, արգելվում են՝

[1] Տե՛ս **Вилкова Н**. Регламентирование недобросовестной конкуренции в праве Франции // "Хозяйство и право". М., 1995, № 4, էջ 112:

[2] Տե՛ս **Коковихин Ю. В., Гукасян Л. Е.** Проблемы правового регулирования недобросовестной конкуренции в условиях переходной экономики России // «Конкурент», 02/1997, № 5, էջ 15:

[3] Տե՛ս «Փարիզյան համաձայնագիր, Արդյունաբերական սեփականության պահպանության մասին, 1883 թվականի մարտի 20», ՀՀ ԱԳՆ, ՊՏ, 2004.12.20/5(13), ՀՀ-ում ուժի մեջ է մտել 25.12.1991:

1) բոլոր գործողությունները, որոնք կարող են որևէ ձևով շփոթություն առաջացնել ձեռնարկության, արտադրանքների կամ արդյունաբերական կամ առևտրական գործունեության, մրցակցի նկատմամբ,

2) սուտ պնդումները, որոնք առևտրային գործունեություն իրականացնելիս կարող են վարկաբեկել կազմակերպությանը, ապրանքները կամ մրցակցի արտադրական կամ առևտրային գործունեությունը,

3) նշումները կամ պնդումները, որոնց օգտագործումը առևտրային գործունեություն իրականացնելիս կարող է հասարակությանը մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի, պատրաստման եղանակի, հատկությունների, օգտագործման պիտանելիության կամ քանակի վերաբերյալ:

Հետագայում ապրանքների ծագման վայրի մասին շփոթմունք առաջացնող հաղորդումները կանխելու նպատակով՝ 1891 թ. ապրիլի 14-ին Փարիզյան համաձայնագրի անդամ երկրները Մադրիդում ստորագրում են ևս մեկ համաձայնագիր[4], որն անբարեխիղճ մրցակցությունն ուղղակի արգելող առաջին միջպետական փաստաթուղթն է: Հիմք ընդունելով համաձայնագիրը՝ 1896 թ. մայիսի 27-ին Գերմանիայում ընդունվեց «Անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի մասին» օրենքը[5], որը ուժը կորցրեց 1909 թվականի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած «Անբարեխիղճ մրցակցության մասին» օրենքով[6]:

Մրցակցության պաշտպանության օրենսդրություն ունեցող բոլոր երկրների, ինչպես նաև Եվրասիական միության անդամ պետությունների օրենսդրությամբ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները[7]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մսամթերքի արտադրության ոլորտի ապրանքատեսակները դասվում են այն հիմնական ռիսկային խմբին, որտեղ հաճախ են ի հայտ գալիս անբարեխիղճ մրցակցության երևույթներ: Մսամթերքի ապրանքատեսակները մեծ

---

[4] Հետագայում այն փոփոխվել և լրացվել է Փարիզյան կոնվենցիայի մասնակից երկրների մի շարք հանդիպումներում՝ 14.12.1900 թ. (Բրյուսել), 02.06.1911 թ. (Վաշինգտոն), 06.11.1925 թ. (Հաագա), 02.06.1934 թ. (Լոնդոն), 01.10.1958 թ. (Լիսաբոն) և 14.07.1967 թ. (Ստոկհոլմ):

[5] Տե՛ս «Gesetz zur Bekämpfung des unlauteren Wettbewerbs», 1896: Այս օրենքը շատ թերի էր. միայն նկարագրում էր անբարեխիղճ մրցակցության առանձին դեպքերը, որի պատճառով էլ անհրաժեշտություն առաջացավ 1909 թ. փոխարինել նորով:

[6] Տե՛ս «Закон ФРГ о недобросовестной конкуренции» // «Конкурент», 09/1995, էջ 40:

[7] Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 1-ին, ընդունվել է 06.11.2000 թ. ՀՕ-112:

պահանջարկ ունեն սպառողների շրջանում, և անշուշտ դրանց նկատմամբ վերահսկողությունը չափազանց կարևոր է և պետք է մշտապես լինի ուշադրության կենտրոնում:

Ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների՝ 2019 թվականի հունվար-հունիս ամիսներին արտադրվել է 5557,9 տոննա մսամթերք, իսկ 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 5297,4 տոննա, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 4.7%-ով[8]:

Մսամթերքի արտադրության ոլորտում 2020 թ. 1-ին կիսամյակում գործունեություն ծավալած ընկերությունների շրջանում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ մսամթերքի արտադրություն իրականացնող 12 խոշոր ընկերությունների ապրանքային արտադրանքի կառուցվածքում երշիկի և նրբերշիկի մասնաբաժինները կազմում են՝ համապատասխանաբար 99,1 և 99,5 տոկոս.

Հեռք են բերել (ներառյալ ներկրում) 7 317 748,3 կգ միս, որից.

- ❖ խոզի միս – 2 576 259,7 կգ կամ 35,2%,
- ❖ ԽԵԿ և/կամ տավարի միս – 1 106 202,5 կգ կամ 15,1%,
- ❖ հավի միս – 3 636 268,2 կիլոգրամ կամ 49,7%:

Մսամթերքի արտադրությունում որպես հումք օգտագործվել է 7 176 000,0 կգ միս, որից.

- ❖ խոզի միս – 3 025 000,0 կգ կամ 42%,
- ❖ ԽԵԿ և/կամ տավարի միս – 868 000,0 կգ կամ 12%,
- ❖ հավի միս – 3 283 000,0 կգ կամ 46%:

Երշիկի և նրբերշիկի արտադրությունում որպես հումք օգտագործվել է 4941804,5 կգ կամ 72% միս, որից.

- ❖ խոզի միս – 1 829 306,1 կգ կամ 37%,
- ❖ ԽԵԿ և/կամ տավարի միս – 493 833,3 կգ կամ 10%,
- ❖ հավի միս – 2 618 665,1 կգ կամ 53%:

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ 2012-2019 թթ. ՀՀ-ում մսի և մսամթերքի իրացման ծավալները ունեցել են աճի միտում: 2019 թ. 2012 թ. նկատմամբ մսի և մսամթերքի իրացման ծավալներն ավելացել են 9361. 2 մլն դրամով կամ 10. 6%-ով: ՀՀ մսի և մսամթերքի իրացման ծավալներում կրճատվել են երշիկեղենի իրացման ծավալները: 2019 թ. 2012 թ. համեմատությամբ երշիկեղենի իրացման ծավալները կրճատվել են 3813. 1 մլն դրամով կամ 19. 7%-ով:

ՀՀ մսի և մսամթերքի իրացման ծավալների վրա ազդող կարևորագույն գործոններից է իրացման միջին գինը, որը ուսումնասիրվող տարիներին բնութագրվել է աճի միտումներով:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2019 թ. 2012 թ. համեմատությամբ ՀՀ-ում տավարի մսի 1 կգ-ի միջին տարեկան իրացման գինը

---

[8] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հոկտեմբերին», Իրական հատված, ՀՀ ԱՎԿ, 2020, էջ 18, https://www.armstat.am/file/article/sv_06_20a_121.pdf

բարձրացել է 20. 3%-ով, ոչխարի մսի և թռչնամսի 1 կգ միջին տարեկան գները՝ համապատասխանաբար 13. 0% և 5. 9%-ով: Նշված ժամանակահատվածում իրացման գնի նվազում գրանցվել է խոզի մսի դեպքում՝ 12. 2%-ով: Մսի շուկայում գների բարձրացումը ազդել է նաև վերամշակված մսամթերքի գների վրա: 2012-2019 թթ. կիսաապխտած երշիկի 1-ին տեսակի 1 կգ-ի միջին տարեկան իրացման գինը 2351. 2 դրամից բարձրացել է 2742. 6 դրամի՝ ավելանալով 391. 4 դրամով կամ 16. 6%-ով:

Աղյուսակ 1

Մսամթերքի իրացման ծավալները (մանրածախ առևտրաշրջանառությունը) ՀՀ-ում, մլն դրամ[9]

Տարիներ	Ընդամենը միս և մսամթերք	Որից՝		
		Մսամթերք և թռչնի միս	Երշիկեղեն	Մսամթերքի այլ տեսակներ
2012	88288.0	66216.0	19313.0	2759.0
2013	95866.9	69721.4	21787.9	4357.6
2014	98228.1	71838.4	21991.4	4398.3
2015	97235.9	73583.9	21024.0	2628.0
2016	83323.7	64669.1	16167.3	2487.3
2017	86823.3	69458.6	14693.2	2671.5
2018	94588.7	76235.7	15529.5	2823.5
2019	97649.2	77499.4	15499.9	4650.0

Աղյուսակ 2

Մսամթերքի միջին տարեկան գները ՀՀ-ում 2012-2019 թթ., դրամ/կգ[10]

Տարիներ	Տավարի միս (ոսկորով)	Խոզի միս	Ոչխարի միս	Թռչնի միս	Կիսաապխտած երշիկ I տեսակի
2012	2544.0	3456.8	3352.1	1463.4	2351.2
2013	2560.9	3058.2	3088.5	1614.8	2494.5
2014	2423.2	3341.3	3066.1	1651.3	2592.7
2015	2441.5	3620.6	3011.5	1590.1	2746.8
2016	2428.3	2645.1	2740.0	1478.1	2701.1
2017	2558.2	3088.2	3091.3	1482.7	2720.0
2018	3111.2	3450.0	3569.6	1420.9	2742.6
2019	3059.6	3035.1	3788.7	1550.3	2742.6

Մսամթերքի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2020 թ. 1-ին կիսամ-

[9] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության առևտուրը և ծառայությունները 2012-2016», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2017, էջ 16-19, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2020», ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 405-408:

[10] Տե՛ս «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2015-2019», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ Եր., 2020, էջ 17, 35, «Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2012-2016», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2018, էջ 18, 38:

յակում հանրապետությունում միայն երշիկի արտադրության ծավալները կազմել են 2725,3 տոննա, իսկ իրացման ծավալները (ներառյալ արտահանում)՝ 2707,0 տոննա: Նույն ժամանակահատվածում միայն նրբերշիկի արտադրության ծավալները կազմել են 2444,0 տոննա, իսկ իրացման ծավալները (ներառյալ արտահանում)՝ 2473,2 տոննա[11] (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

ՀՀ մսամթերքի արտադրության ծավալների կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում՝ 2020 թ. 1-ին կիսամյակ



Նույն ժամանակահատվածում մսամթերքի արտադրությունում որպես հումք օգտագործվել է հավի, խոզի և խոշոր եղջերավոր կենդանիների և/կամ տավարի միս՝ համապատասխանաբար 3283, 3025 և 868 տոննա ծավալներով:

Մսամթերքի շրջանառության ոլորտի կարգավորման համատեքստում խիստ կարևորվում են սպառողների շահերի պաշտպանությունը, մասնավորապես (էջ 6)՝ անբարեխիղճ մրցակցության երևույթների բացառումը: Երբեմն տնտեսավարող սուբյեկտները դրսևորում են այնպիսի վարքագիծ, որը կարող է դիտվել որպես հասարակությանը մոլորեցնող: Համաձայն Օրենքի՝ «ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն»[12]:

«Մոլորեցում է համարվում ապրանքների որակն անհիմն չափազանցնելը, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ձևավորման (ապակողմնորոշման), կեղծիքը գովազդատուի անձի վերաբերյալ: Հասարակության մոլորեցում է համարվում նաև ապրանքի արտադրության տարեթվի, ամսվա, օրվա կամ պահպանման ժամկետի, տվյալ ապրանքը արտադրող կամ ներ-

[11] Ծավալները հաշվարկվել են հեղինակների կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

[12] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 1-ին, ընդունվել է 06.11.2000 թ., ՀՕ-112:

կրող տնտեսավարող սուբյեկտի անվանման, հասցեի, օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների բացակայությունը, օրենքին հակասող նշումների առկայությունը, գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ և ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը, այնպիսի տվյալների բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ, ինչպես նաև օրենքին հակասող գովազդը»[13]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընկերությունների կողմից ոչ լիարժեք մակնշումը միշտ չէ, որ իրականացվում է դիտավորյալ՝ սպառողներին մոլորեցնելու նպատակով:

Այսպես, ՀՀ «Երշիկ» և «Նրբերշիկ» ապրանքատեսակների արտադրությունը կարգավորվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թ. հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված՝ «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) դրույթներով, որի համաձայն, ի թիվս այլնի, կանոնակարգման առարկա են «մսային և միս պարունակող երշիկեղեն» արտադրատեսակները:

Կանոնակարգով սահմանվում են Մաքսային միության տարածքում պարտադիր կիրառման և կատարման՝ սպանդային մթերքի և մսամթերքի մակնշմանն ու փաթեթավորմանը ներկայացվող պահանջները, որոնք ամրագրված են Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ հաստատված՝ «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 022/2011 տեխնիկական կանոնակարգի և Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ հաստատված՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 005/2011 տեխնիկական կանոնակարգի դրույթներով:

Փաստաթղթի համաձայն՝ Կանոնակարգի դրույթները չեն տարածվում մի շարք մթերքների, ինչպես նաև դրանց առնչվող պահանջների և գործընթացների վրա, մասնավորապես՝ թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող մթերքների, ինչպես նաև այնպիսի սննդամթերքի, որի բաղադրագրի մեջ թռչնի միսը և դրա վերամշակումից ստացվող մթերքներն ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում են այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը[14]:

---

[13] Նույն տեղում, մաս 2-րդ:

[14] Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգ, գլուխ առաջին, կետ 4-րդ, «գ» ենթակետ, ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ:

«**Երշիկեղեն**» արտադրատեսակը պատրաստվում է մսային և ոչ մսային մանրացված բաղադրամասերից: Ընդ որում՝ **«մսային բաղադրիչը»** սննդամթերքի բաղադրագրի բաղկացուցիչ մաս է, որը սպանդային մթերք կամ սպանդային մթերքի վերամշակմամբ է ստացված: Երշիկեղենի արտադրության մեջ կիրառվելիս այն չի պարունակում ոսկոր (բացառությամբ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից պատրաստված երշիկեղենի): **«Ոչ մսային բաղադրիչը»** ևս սննդամթերքի բաղադրագրի բաղկացուցիչ մաս է, որը սպանդային մթերք կամ սպանդային մթերքի վերամշակմամբ ստացված մթերք չէ: Միաժամանակ, **«մսային արտադրանք»** է համարվում 60 տոկոսից ավելի զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերքը, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ կամ առանց դրանց, իսկ **«միս պարունակող մթերք»**՝ մսամթերքը, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ, և որում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 5-60 տոկոս (ներառյալ)[15]:

Սպառողներին ապակողմնորոշող գործողություններից և մոլորեցումից զերծ պահելու նպատակով՝

- չի թույլատրվում ընդհանուր կիրառման մսամթերքը մակնշել՝ օգտագործելով հորինված այնպիսի անվանումներ, որոնք ասոցացվում են մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի հետ (օրինակ՝ նրբերշիկ «Դետսկիե»),
- չի թույլատրվում մսամթերքը մակնշել՝ օգտագործելով հորինված այնպիսի անվանումներ, որոնք շփոթելու աստիճան նման են մսամթերքի համար միջպետական չափանիշներով սահմանված հորինված անվանումներին՝ բացառությամբ սահմանված չափանիշներով թողարկվող մսամթերքի (օրինակ՝ «Բժշկական», «Կաթնային»),
- թույլատրվում է օգտագործել անատոմիական հատկանիշներով պայմանավորված համընդհանուր անվանումներ (օրինակ՝ «կրծքամիս», «բեկոն», «վզիկ», «սրունքի միս»), որոնք բնորոշ են կտրվածքի վրայի նկարին (օրինակ՝ «սերվելատ», «սալյամի», «խոզապուխտ»)՝ նկատի ունենալով բաղադրագրի համաձայն օգտագործված (օրինակ՝ «խոզի մսի», «տավարի մսի», «խոզի մսից», «տավարի մսից») կամ խոհարարության և հասարակական սննդի ոլորտում լայնորեն կիրառվող բաղադրամասերը (օրինակ՝ «պաստրոմա», «բալիկ», «կուպատի», «բիֆշտեքս»),
- մսամթերքի մակնշվածքի մեջ չի թույլատրվում օգտագործել «արտադրված է պաղեցված հումքից» բառերը կամ իմաստով մոտ նման բառեր, որոնք հնարավոր է օգտագործվեն ջերմային այլ վիճակում գտնվող մսամթերքի կամ սպանդային մթերքի պատրաստման մեջ՝ բացառությամբ պաղեցվածի,

---

[15] Տե՛ս նույն տեղը, գլուխ երկրորդ, կետ 5-րդ, ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ:

• մսամթերքի անվանման մեջ նշվում կամ անվանմանը կից տեղեկություն է տեղադրվում մսամթերքի խմբի (օրինակ՝ «մսային», «միս պարունակող», «մսաբուսական», «բուսամսային») և տեսակի մասին (օրինակ՝ «երշիկեղեն», «մսային արտադրանք», «կիսապատրաստվածք», «խոհարարական արտադրատեսակ», «պահածոներ», «խոզի ճարպից ստացված մթերք», «չոր մթերք», «արգանակ»)[16]:

Դեռևս 2014 թվականից շրջանառության մեջ է դրվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Թռչնամսի և դրա վերամշակման արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի նախագիծը[17], որում այլ հիմնական հասկացություններից բացի, առանձնացված «սահմանվում է» նաև թռչնի մսից պատրաստված երշիկների տեսակները: Սակայն այս նախագծով չեն կանոնակարգվում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգում հավի մսից պատրաստված երշիկեղենի վերաբերյալ բացթողումներն ու խնդիրները: Նշվածի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ այն շրջանառության մեջ դնելուց հետո՝ 2014 թվականից այնուամենայնիվ դեռևս իրավական վերջնական փաստաթուղթ չի դարձել:

Եզրակացություն: Այսպիսով, մսամթերքի արտադրության ոլորտում «Երշիկեղեն» և «Նրբերշիկ» ապրանքատեսակների շրջանառության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առկա են մի շարք խնդիրներ, որոնք կարող են սպառողներին մոլորեցնելու պատճառ դառնալ և դիտվել անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Մասնավորապես.

• Կանոնակարգի հայերեն տարբերակում նշվում է, որ *«մսային արտադրանք»* է համարվում <u>60 տոկոսից ոչ ավելի</u> զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերքը, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ կամ առանց դրա, մինչդեռ ռուսերեն տարբերակում *«մսային արտադրանք»* հասկացությունը նշվում է հետևյալ կերպ՝ ««мясной продукт» - мясная продукция, которая изготовлена с использованием или без использования немясных ингредиентов и массовая доля мясных ингредиентов которой составляет <u>более 60 процентов</u>»: Բացի այդ, Կանոնակարգի համաձայն՝ մսամթերքի անվանման մեջ նշվում կամ անվանմանը կից տեղեկություն է տեղադրվում մսամթերքի խմբի (օրինակ՝ «մսային», «միս պարունակող», «մսաբուսական», «բուսամսային») և տեսակի (օրինակ՝ «երշիկե-

[16] Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգ, գլուխ ինը, կետ 107, 108, 109, ընդունվել է 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ:

[17] Տե՛ս http://www.eurasiancommission.org/ru/act/texnreg/deptexreg/tr/Documents/%D0%9F%D1%80%D0%BE%D0%B5%D0%BA%D1%82%20%D0%A2%D0%A0%20%D0%A2%D0%A1.pdf

ղեն», «մսային արտադրանք», «կիսապատրաստվածք», «խոհարարական արտադրատեսակ», «պահածոներ», «խոզի ճարպից ստացված մթերք», «չոր մթերք», «արգանակ») մասին տեղեկատվություն։ Այսինքն՝ Կանոնակարգի ռուսերեն տարբերակի պահանջն է, որ 60 տոկոսից ավելի զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերքի անվանման մեջ նշվի կամ անվանմանը կից տեղադրվի դրա խմբի և տեսակի մասին (օրինակ՝ «երշիկեղեն», «մսային արտադրանք», «կիսապատրաստվածք») տեղեկություն։ Իսկ Կանոնակարգի հայերեն տարբերակի համաձայն՝ նույն խմբի և տեսակի մասին տեղեկությունը պետք է նշվի կամ տեղադրվի 60 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերքի անվանման մեջ կամ անվանմանը կից։

Նշված անհամապատասխանությունը էական բացասական ազդեցություն կարող է ունենալ մսամթերքի ոլորտի, մրցակցային իրավիճակի, ինչպես նաև սպառողների շահերի վրա։ Մասնավորապես, մսամթերք, այդ թվում երշիկ և նրբերշիկ արտադրող տնտեսավարող սուբյեկտները, ելնելով Կանոնակարգի հայերեն տարբերակից, կարող են օգտվել վերը նշված անհամապատասխանությունից՝ 60 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերքի անվանման մեջ կամ անվանմանը կից նշելով դրանց խումբը որպես «մսային» և տեսակը որպես «մսային արտադրանք», «կիսապատրաստվածք», և թյուր տպավորություն ստեղծել, որ դրանց մսային բաղադրամասեր պարունակող մսամթերքի զանգվածային բաժինը կազմում է 60 տոկոսից ավելի։

- Վերոնշյալ խնդրի կարգավորման համատեքստում գտնում ենք, որ Կանոնակարգի հայերեն տարբերակում անհրաժեշտ է կատարել շտկումներ և վերացնել անհամապատասխանությունները։
- Կանոնակարգի համաձայն՝ մսամթերքը, որի մսային բաղադրամասեր պարունակող զանգվածային բաժինը կազմում է 60 տոկոսից ավելի, «մսային արտադրանք» է, իսկ այն մսամթերքը, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ, և որում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 5-60 տոկոս (ներառյալ)՝ «միս պարունակող մթերք» է։ Ընդ որում, նշված հասկացությունները պետք է նշվեն մսամթերքի անվանման մեջ կամ տեղադրվեն անվանմանը կից։ Այսպիսով, մեր համոզմամբ, սպառողները, մսամթերքի անվանման մեջ տեսնելով նշված կամ անվանմանը կից տեղադրված «միս պարունակող մթերք» կամ «մսային արտադրանք» հասկացությունները, կարող են մոլորության ենթարկվել, քանի որ դժվար է պատկերացնել, թե մսամթերքի մեջ քանի տոկոս միս է օգտագործված՝ 5%, 10%, 40%, թե՞ 60%, իսկ «մսային արտադրանք» նշումով մսամթերքի դեպքում՝ 61%, 70%, 90%, թե՞ 100%։
- Վերոնշյալ խնդրի կարգավորման նպատակով գտնում ենք, որ

անհրաժեշտ է Կանոնակարգում ավելացնել պահանջ՝ մսամթերքի, այդ թվում՝ երշիկի և նրբերշիկի բաղադրության մակնշման մեջ մսի տեսակներին կից մակնշվի օգտագործված մսի քանակը՝ տոկոսային արտահայտությամբ (օրինակ՝ հավի միս – 40%, խոզի միս – 20%, ԽԵԿ – 10% և այլն), որպեսզի սպառողներն ամբողջական պատկերացում կազմեն ձեռք բերվող մսամթերքի մասին: Նշված խնդրի կարգավորումը բխում է ինչպես սպառողների, այնպես էլ անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի շահերից, քանի որ այն կարող է որոշիչ գործոն դառնալ սպառողական վարքագծի ձևավորման համատեքստում, իսկ մրցակցության առումով կարող է էական լինել անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարում: Մասնավորապես, երշիկի և նրբերշիկի բաղադրության մակնշման մեջ մսի տեսակներին կից օգտագործված մսի քանակը՝ տոկոսային արտահայտությամբ մակնշելու պարագայում էականորեն կարող են փոխվել նաև գնագոյացման կառուցակարգերն ու հետևաբար նաև երշիկի և նրբերշիկի գները:

- Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել շատ արտադրվող երշիկի և նրբերշիկի բաղադրագրի մեջ թռչնի միսը գերազանցում է մթերատու այլ կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը, ինչը, ըստ մեզ, պայմանավորված է թռչնի մսի ցածր գնով: Մասնավորապես, գծապատկեր 2-ում ներկայացված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ մսամթերքի արտադրությունում 2020 թ. հունվար-հունիս ամիսներին որպես հումք օգտագործվել է հավի, խոզի և ԽԵԿ և/կամ տավարի միս, որտեղ օգտագործված մսի հումքի շուրջ 45.7%-ը բաժին է ընկնում միայն հավի մսին: Մինչդեռ Կանոնակարգի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Կանոնակարգի գործողությունը չի տարածվում թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող մթերքների, ինչպես նաև այնպիսի սննդամթերքի վրա, որի բաղադրագրի մեջ թռչնի միսը և դրա վերամշակումից ստացվող մթերքներն ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում են այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը:

- Վերոնշյալ խնդրի կարգավորման համատեքստում նպատակահարմար ենք համարում Կանոնակարգում կատարել համապատասխան փոփոխություն, մասնավորապես՝ 4-րդ կետի «գ» ենթակետով սահմանված բացառությունները հանել:

Բանալի բառեր - *մսամթերք, երշիկ և նրբերշիկ, անբարեխիղճ մրցակցություն, ԵԱՏՄ, «մսային արտադրանք», «միս պարունակող մթերք»*

ВАРДАН АЛЕКСАНЯН, ДАВИД ОГАНЕСЯН – ***Регулирование возможных проявлений недобросовестной конкуренции в сфере обращения мясной продукции и пути их разрешения в рамках ЕАЭС.*** – Во всех странах, имеющих законодательство о защите конкуренции, недобросовестная конкуренция запрещена. Запрещена она также законодательствами государств – членов ЕАЭС. Вве-

дение общественности в заблуждение – одно из проявлений недобросовестной конкуренции, однако не во всех случаях в поведении хозяйствующих субъектов есть умысел. Иногда подобные явления обусловлены неправильным правовым регулированием или толкованием законодательства. Исследования в области обращения колбасных изделий и сосисок показывают, что в регулирующем данную сферу техническом регламенте ЕАЭС и в его армянской версии наблюдается ряд проблем и несоответствий, которые могут ввести потребителей в заблуждение и рассматриваться как элемент недобросовестной конкуренции. Во избежание этого необходимо внести в соответствующие регламенты поправки и уточнения.

Ключевые слова: *мясная продукция, колбаса и сосиски, недобросовестная конкуренция, ЕАЭС, «мясная продукция», «мясосодержащие продукты»*

VARDAN ALEQSANYAN, DAVIT HOVHANNISYAN – ***Regulations of Possible Unfair Competition in the Field of Meat and Ways of their Improvement within the EEU.*** – Unfair competition is prohibited in all countries having the law on competition protection. It is also prohibited by the legislation of the member states of the Eurasian Union. Public Misleading is one of the manifestations of unfair competition, but the behavior of companies is not always intentional. Sometimes such behavior is the result of incorrect regulation or legal misinterpretations. Studies on the turnover of "Sausages" and "hot dog" products in the field of meat show that EEU by-laws regulating the current sphere and its Armenian version contain a number of problems and inconsistencies, which can mislead consumers and be considered as manifestations of unfair competition. Therefore, clarifications and changes should be made to avoid such negative consequences.

Key words: *meat, sausage and hot dog, unfair competition, EEU, “meat products”, “products containing meat”*